

ցին համադրելով օգտագործել է Եսայու մարգարեության ԺԳ գլխի 21-րդ և Երեմիայի մարգարեության Ծ գլխի 39-րդ համարները, թեպետ պատմիչն ինքը հղումն անում է միայն Եսայուն. «Եվ յաղագս երկնանման և ադինասարաս եկեղեցեաց զի՞նչ ասացից՝ որք ի խաւարի մնացեալ և ի բնակչաց թափուր եղեալ՝ մերկացեալ ի զարդուց՝ **եղեալ հանգրոանք համբարոաց և ջայլամաց ըսոք Եսայեայ տեսանողի, որջք ադոխուց և նապաստակաց, մակադ-տեղք խաշանց և անդէոց, բոյնք թռչնոց և աւերաբնակ բոոց**» (էջ 88): Սա, թերևս այն պատճառով, որ տեքստային հարազատություն ու համընկնումներ կան Եսայու մարգարեության և Երեմիայի մարգարեության նշված համարների միջև:

Աստվածաշնչյան ինտերտեքստի ամենատարածված դրսևորումը Դավրիժեցու պատմագրքում, դրա՝ իբրև օրինակ-հաստատումն է, գրված-ավանդվածի իրականացումը կյանքում: Ինչպես՝ «Արդ՝ աստանօր պարտ է մեզ սքանչանալ և հիացմամբ զարմանալ ընդ հատուցումն գործոցս՝ որ կատարեցաւ ի վերայ Մելքիսէթ կաթողիկոսին. զի սա նախ՝ զԱստուծոյ օգնութիւնն անտես արարեալ՝ ի մարդ յուսացաւ, և ստունգանեաց **զբանս օրինացն, որ ասէ. «Անիծեալ որ դիցէ զոյս իւր ի մարդ»**» (էջ 188, հղվել է՝ Երեմիա, ԺԷ, 5): Կամ՝ քաղաքերումներ կատարելով Ելից գրքից (Ա, 6, 8–10)՝ «Եւ որպէս ասէ Գիրն աստուածային, թէ վախճանեցաւ Յովսէփ և ամենայն եղբարք նորա և ամենայն ազգն այն. եկաց այլ թագաւոր՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ, և ասէ ցազգն իւր. «Եկայք, հնարեսցուք ինչ ազգին Իսրայէլի»», Դավրիժեցին անմիջապէս ավելացնում է. «Ըստ այսմ օրինակի պատահեաց և մերոյս ազգի...» (էջ 96):

Հակոբ Օշականը, արձանագրելով այս երևույթը, դրա մեջ նաև դրամատիկ շեշտեր է տեսնում. «Հայ պատմիչը պիտի մխիթարուի Սուրբ Գիրքին համարները մեր արիւնին ու մեր պատիւին